«Նոր ժամանակի կրթություն»

ՀԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Հետազոտության թեման՝

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիանա Ղուկասյան

Դպրոց՝ Մելանթոն Արսլանյանի անվան Թալինի թիվ 1 հիմնական

Արագածոտն 2022

Բովանդակություն

Ներածություն 2

Գլուխ 1

1. Որքանով է կարևոր շրջակա միջավայրի և բնության պահպանության հիմնախնդիրների ուսուցումը դպրոցում 4
2. Թվային տվյալներ 5

Գլուխ 2

Էկոլոգիական կրթության ռազմավարության նպատակը և խնդիրները 6

1. Նպատակը

2. Խնդիրները
Գլուխ 3
Էկոլոգիական կրթության, դաստիարակության և բնության պահպանության բացթողումները 7
Գլուխ 4
Հանրակրթական բնագավառում բնապահպանական և կրթական քաղաքականության ներդաշնակ զարգացման ապահովում 8
Գլուխ 5
1. Էկոլոգիական դաստիարակությունը միջնակարգ դպրոցում 9
2. Էկոլոգիական կրթության ակնկալվող արդյունքները 10
3. Դպրոցական էկոլոգիական կրթության տեսական և գործնական ուղիները..... 11
Գլուխ 6
1. Լրացուցիչ ու շարունակական կրթություն.....12
2. Լրացուցիչ ու շարունակական կրթության առումով առկա խնդիրները..13

Առաջարկություններ 13
Եզրակացություն 14
Գրականության ցանկ 14

Ներածություն

Բնության պահպանությունը պետական ու հասարակական միջոցառումների համալիր է, որի նպատակն է պահպանել բնական հարստությունները, նպաստել դրանց վերարտադրմանը և ապահովել արդյունավետ օգտագործումը, կանխարգելել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունները, ապահովել մարդկության և բնության կենսագործունեության ներդաշնակությունը:

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը գլոբալ էկոլոգիական-բնապահպանական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման,

ջրային ռեսուրսների, օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մարդկային ընկալումը հետևանք են էկոլոգիական-բնապահպանական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության:

Հետևաբար շրջակա միջավայրի և բնության պահպանության նպատակին հասնելու համար շատ կարևոր է կազմակերպել էկոլոգիական կրթություն և դաստիարակություն բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Էկոլոգիական-բնապահպանական կրթությունը անհատի կրթության, դաստիարակության և զարգացման անընդմեջ, բազմակողմանի և պարտադիր իրականացվող գործընթաց է՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև արժեհամակարգի և վարքագծի կողմնորոշմանն ու էկոլոգիական կրթության ձևավորմանը:

Էկոլոգիական կրթությունը տեսական գիտելիքներից ու գործնական կարողություններից բացի նաև նախ և առաջ փիլիսոփայական մոտեցում է բնությանը ու գործիք՝ մարդու և բնության միջև կապը ընկալելու, հասկանալու, մեկնաբանելու և այդ ամենի հիման վրա շրջակա միջավայրի և բնության հանդեպ առանձին անհատների, մարդկանց խմբերի և ողջ հասարակության վարքագծի նոր մոդելներ մշակելու առումով:

Հասարակությունը աշխարհ է, որտեղ ապրում է մեր մարմինը,
բնությունը աշխարհ է, որտեղ մեր հոգին է:

Վիկտոր Հյուգո

Էկոլոգիական կրթության մշակույթը շրջակա միջավայրի և բնության հետ մարդկության կենսագործունեության ժառանգած փորձն է, որը նպաստում է առողջ կեսակերպին, երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, կյանքի որակի բարելավմանը և էկոլոգիական անվտանգությանը: Էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը պարտադիր է կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

Ողջ աշխարհում էկոլոգիական կրթության զարգացման համար շատ կարևոր իրադաձություն հանդիսացավ շրջակա միջավայրի խնդիրների կապակցությամբ ՄԱԿ-ի 1972 թվականի համաժողովը: Այդ ժամանակ

ստորագրվեց հայտարարություն, որում ընդունվում է, որ <<մարդուն շրջապատող շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում է կարևոր խնդիր, որն ազդում է ամբողջ աշխարհի ազգերի բարեկեցության և տնտեսական զարգացման վրա>>: Հայտարարության ընդգծված սկզբունքներից մեկը նշում է, որ երեխաներին և մեծահասակներին պիտի հասանելի լինեն էկոլոգիական խնդիրների մասին ակտուալ տեղեկատվությունը և իմանան դրանց լուծման հնարավոր տարբերակները:

ԳԼՈՒԽ 1

1.1 **Որքանով է կարևոր շրջակա միջավայրի և բնության պահպանության հիմնախնդիրների ուսուցումը դպրոցում**

Շրջակա միջավայրն այն է, ինչ շրջապատում է մեզ և ազդում մեր զարգացման վրա: Գիտական լեզվով ասած՝ շրջակա միջավայրը ֆիզիկական,

աշխարհագրական, բիոլոգիական և սոցիալական, մշակութային, քաղաքական պայմանների համախումբ է, որը որոշում է մարդու գոյության բնույթը և ձևը: Շրջակա միջավայրը, բնությունը ազդում են մարդկանց կյանքի վրա և ընդհանուր հասարակության զարգացման վրա: Դրա հետևանքով մարդկության առաջընթացը և շրջակա միջավայրը բնության հետ միասին սերտորեն կապված են միմյանց հետ:

Շրջակա միջավայրը բնության հետ միասին կարող է իր մեջ վտանգներ կրել, որոնք նաև մարդու գործունեության բացասական հետևանքներ են, օրինակ՝ աղտոտված օդ, ջրով փոխանցվող վարակներ, թունավոր քիմիական նյութեր և բնական աղետներ: Սրանք միայն մի մասն են այն վտանգների, որոնք կարող են լինել մարդկության համար:

Շատ երկրներում հողի, ջրի, անտառների ու բնական ռեսուրսների աղտոտման տեմպերը տեղի են ունենում վտանգավոր արագությամբ:

Եթե մենք ուզում ենք, որ մարդկության զարգացումը լինի կայուն, այսինքն բավարարի այսօրվա պահանջները՝ վտանգի տակ չդնելով ապագա սերունդների հնարավորությունները, երկրները պիտի հոգ տանեն ոչ միայն տնտեսական առաջընթացի մասին, այլև շրջակա միջավայրի, բնության պահպանության մասին:

Աղքատության դեմ պայքարում կարևոր ասպեկտներից մեկը հանդիսանում է շրջակա միջավայրի և բնության պահպանությունը ողջ աշխարհում:

1.2 **Թվային տվյալներ**

Ամեն տարի աշխարհում

- 3միլիոն մարդ վաղաժամ մահանում է վարակներից, որոնք փոխանցվում են ջրով:

- Միայն Հնդկաստանում մինչև 5 տարեկան 700000 երեխաներ մահանում են փորլուծությունից
- 2 միլիոն մարդ մահանում է նրանից, որ շնչում է տներում տեղադրված տաքացման վառարանների ծուխը: Նման մահերի կեսը բաժին է ընկնում Հնդկաստանին և Չինաստանին: Զոհերը հիմնականում կանայք և երեխաներ են աղքատ գյուղական ընտանիքներից, չունենալով մաքուր ջրի հնարավորություն, սանիտարական պայմաններ և տնտեսական-կենցաղային կարիքների համար ժամանակակից վառելիք:
- 1 միլիոն մարդ, հիմնականում Աֆրիկայում՝ Սահարայից հարավ, մահանում է մալարիայից:
- 1 միլիոն մարդ մահանում է քաղաքային օդի աղտոտումից:
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշվետվության համաձայն՝ <<հիվանդությունների գլոբալ բեռը>> զարգացող երկրներում մահվան պատճառների 20% հանդիսանում են փորլուծությունը, մալարիան և շնչառական վարակները:

Մարդը տիրում է բնությանը, դեռ չսովորելով տիրապետել իրեն:

Ալբերտ Շվեյցեր

Մեր օրերում մարդիկ ամեն ինչի գինը գիտեն, բայց ոչինչ արժևորել չգիտեն:

Օսկար Ուայլդ

ԳԼՈՒԽ 2

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 **Նպատակը** ՀՀ-ում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումը, այդ բնագավառում պետության, հասարակության և միջազգային կառույցների միջև ներդաշնակ և փոխշահավետ համագործակցության ընդլայնումը ուղղված է էկոլոգիական կրթության և բնության պահպանության որակի բարելավմանը: Հանրային իրազեկության մակարդակի բարձրացմանը, հասարակության էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որը կապահովի հասարակության պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի և բնության հանդեպ:

2.2 **Խնդիրները** Վերլուծել Հայաստանում Էկոլոգիական կրթության և դաստիարակության առկա վիճակը: Սահմանել էկոլոգիական կրթության և դաստիարակության, բնության պահպանության ռազմավարական ուղիները:

Հիմնավորել էկոլոգիական կրթության և դաստիարակության, բնության պահպանության տեսական և գիտագործնական կարևորությունը, դերը, նշանակությունը: Ապահովել էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության գործընթացի շարունակականությունը և մեթոդական կապը կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

ԳԼՈՒԽ 3

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

- Հանրակրթության համակարգի (տարրական, հիմնական, միջնակարգ) շրջանակներում էկոլոգիական կրթության չափորոշչային պահանջների համալիր ծրագրի բացակայություն:
- Հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում էկոլոգիական կրթությունը իրականացվում է տարբեր առարկաների ծրագրերում ոչ թե ինտեգրված ձևով, այլ կցած տեսքով:
- Առարկայական ծրագրերում էկոլոգիական կրթությանը և բնության պահպանությանը վերաբերող բաժինները ներկայացված են թերի, առանց հաշվի առնելու ներառարկայական և միջառարկայական կապերը:
- Ավագ դպրոցը չունի էկոլոգիակա կրթության չափորոշիչներ և ծրագրեր: Եղածները թերի են և հաճախ կրկնում են հիմնական դպրոցի ծրագրերը:
- Էկոլոգիական կրթության և բնության պահպանության բնագավառում հանրակրթական դպրոցի ուսուցիչների մասնագիտական զարգացման, իրազեկության անբավարար մակարդակը:
- Անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով էկոլոգիական կրթության իրականացման ժամանակակից մեթոդները, ձևերը, մոտեցումները հիմնականում չեն կիրառվում, առարկայական ծրագրերը հագեցած են տեսական նյութերով: Գործնական, նախագծային, հետազոտական աշխատանքների համար ժամաքանակը խիստ սահմանափակ է:
- Էկոլոգիական կրթությունը որպես խիստ անհրաժեշտ արտադպրոցական բաղադրիչ հիմնականում բացակայում է պետական աջակցության բացակայության պատճառով:
- Բացակայում են ուսումնական գրականությունը և դիդակտիկ նյութերը սովորողների տարբեր տարիքային խմբերի համար:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Յուրաքանչյուրը պիտի հասկանա ինչ հետևանքներ է բերում մարդու գործունեությունը շրջակա միջավայրի և բնության վրա և կրի պատասխանատվություն դրա համար: Էկոլոգիական պատասխանատվությունը բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորում է:

Հանրակրթական դպրոցը լուրջ ներուժ ունի կայուն զարգացման սկզբունքներին համահունչ էկոլոգիական կրթություն իրականացնելու համար, որի համար անրաժեշտ է հետևյալը:

- Լրամշակել էկոլոգիական կրթությանը վերաբերող հանրակրթական ուսումնական առարկաների ծրագրային նյութերը, որոնք հանրակրթության տարբեր աստիճաններում (տարրական, հիմնական, ավագ դպրոցներ) կապահովեն ներառարկայական ու միջառարկայական կապերը և կուժեղացնեն էկոլոգիական կրթությունը այդ առարկաների շրջանակներում:
- Կատարելագործել կրթության բոլոր մակարդակների համար էկոլոգիական կրթության չափորոշիչները:
- Ստեղծել արտադասարանական, արտադպրոցական կենտրոններ, ամառային դպրոցական ճամբարներ:
- Պատրաստել հանրակրթական համակարգի ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացներ կազմակերպման համար ուսուցիչ վերապատրաստողների:
- Կազմակերպել հանրակրթության համակարգի ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացներ՝ էկոլոգիական կրթության և բնության պահպանության բովանդակության ուսուցման մեթոդների վերաբերյալ ամբողջական գիտելիքների ձևավորման համար:
- Ստեղծել անհրաժեշտ գրականություն ուսուցիչների, ուսուցիչ վերապատրաստողների համար:

ԳԼՈՒԽ 5

5.1 **ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

Ներկա ժամանակներում մարդկությունը ապրում է շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների սրացման դարաշրջանում: Բնական անբարենպաստ և տեխնոերևույթների փոխկապակցված սրացման ու ընդլայնման ժամանակներում, երբ յուրաքանչյուրը պիտի ունենա հիմնավոր գիտելիքներ էկոլոգիական ռացիոնալ կենսագործունեության և կողմնորոշվելու ունակություն շրջակա միջավայրի կողմից սպառնալիքների ոլորտում: Նման գիտելիքների հաղորդումը, հմտությունների և գիտելիքների զարգացումը կատարվում է էկոլոգիական կրթության շրջանակներում: Էկոլոգիական կրթությունը պիտի դիտարկվի որպես համընդհանուր կրթության մաս:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում բնապահպանական կրթության առջև դրված նպատակն է զարգացնել հոգատար և պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի և բնության նկատմամբ, որի հիմքում պիտի լինի բնապահպանական գրագիտության ձևավորումը, զարգացումը և տարածումը:

Էկոլոգիական կրթությունը նպաստում է յուրաքանչյուր սովորողի մոտ ժամանակակից էկոլոգիական-բնապահպանական հիմնախնդիրների, դրանց հետևանքներին, խնդիրներին լուծում տալու, նորերը կանխարգելելու գիտելիքներ, հմտություններին և կարողություններին:

Հիմնական դպրոցը հանդիսանում է էկոմշակույթի և անձի աշխարհայացքների ձևավորման կարևորագույն փուլերից մեկը:

Էկոլոգիական կրթության ուսումնասիրումը պիտի ապահովի սովորողների մոտ էկոլոգիական մտածողության զարգացումը, որը կբերի

բնական, սոցիալական, տնտեսական, քաղաքական երևույթների առողջ և կայուն փոխկապակցվածության: Կբարելավվի ազդեցությունը կյանքի և շրջակա միջավայրի որակի վրա: Այդ գործում հիմնական առարկան, որը պիտի ձևավորի այդ հմտությունները, հանդիսանում է աշխարհագրությունը:

5.2 **ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

- Գտնել բնապահպանական խնդիրները և դրանց լուծման ուղիները:
- Դաստիարակել պատասխանատու և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և բնության հանդեպ:
- Բացահայտել մարդու ազդեցության թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքները շրջական միջավայրի և բնության վրա:
- Նպաստել սովորողների մոտ էկոմտածողություն մարդու գործունեության տարբեր բնագավառներում
- Հասկանան և արժևորեն շրջակա միջավայրի և բնության որակը որպես անվտանգության, առողջ ապրելակերպի բնական հիմք:
- Ձեռք բերեն գործնական հմտություններ:
- Կարողանան կատարել շրջակա միջավայրի որակի գնահատում և բարելավում:
- Հասկանան բնապահպանական գլոբալ խնդիրների էությունը:
- Կարողանան խնդիրներին ինքնուրույն լուծում տալ:
- ՈՒնենան էսթետիկ և բարոյական վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:
- Ձևավորվի ֆիզիկական դաստիարակության առողջ ապրելակերպի պահանջարկ:
- Ձեռք բերեն շրջակա միջավայրի պահպանության սեփական նախնական փորձ:
- Զարգանա պատասխանատվություն սեփական բարեկեցիկ կյանքին և բարեկեցիկ էկոլոգիական շրջապատի նկատմամբ:

- Էկոլոգիական կրթությունը պիտի ապահովի սովորողների մոտ բնական գիտությունների և հետազոտությունների կարևոր դերը ժամանակակից աշխարհում:

5.3 ԴՊՐՈՑԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կյանքի գոյության հիմքում ընկած են բնության օրենքները, որի ուսումնասիրմանը ուղղված է տեսական ուսուցումը: Էկոլոգիական կրթության իրականացման հիմնական ձևը դպրոցում դասն է, բայց ժամանակի սահմանափակությունը դասի շրջանակներում և պետական ծրագրի առկայությունը հնարավորություն չեն տալիս ուսուցչին լիարժեք փոխանցել բնապահպանական ուղղվածության գիտելիքներ և առավել ևս գործնական կարողություններ: Մեծ մասամբ էկոլոգիական կրթությունը դպրոցում հենվում է մի քանի ձգտող և ոգեշնչված ուսուցիչների վրա, ովքեր իրականացնում են իրենց գործունեությունը հիմնականում արտադասարանական աշխատանքների ժամանակ:

Աշխարհայացքի ձևավորումը և զարգացումը իրականանում է գործնական աշխատանքի շնորհիվ շրջակա միջավայրի բնական օբյեկտների դիտարկման և անձնական փորձի միջոցով:

Միայն գրականության, համացանցի, հեռուստահաղորդումների միջոցով հնարավոր չէ լիարժեք ձևավորել գործնական ուղորդված հայացքներ: Աշխարհայացք ձևավորվում է անձի գիտակցության մեջ ստացված գիտելիքները, հմտությունները և կարողությունները գործածելուց հետո:

Ասա ինձ ու ես կմոռանամ,
Ցույց տուր ինձ, ու ես կհիշեմ.
Թույլ տուր անեմ, ու ես կսովորեմ:

Կոնֆուցիոս

Ուսուցման ընթացքում սովորողի մոտ ձևավորվում են հետևյալ որակները՝

- քաղաքացու պատասխանատվություն իր հայրենիքի բնությունը պահելու և պահպանելու գործում
- ինքնուրույն տեղեկություններ որոնելու, մշակելու, համակարգելու և վերարտադրելու կարողություն էկոլոգիայի և բնապահապանության ոլորտում:

ԳԼՈՒԽ 6

6.1 **Լրացուցիչ ու շարունակական կրթություն**

Էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման և էկոլոգիական վարքագծային մշակույթի արմատավորման գործընթացում առանցքային դեր ունեն լրացուցիչ կրթական դասընթացները, որոնց հիմնական նպատակը հասարակության կրթական պահանջմունքների բավարարումն է՝ կատարելագործելով գիտելիքները, կարողությունները, հմտությունները և մարտահրավերներին դիմակայելու կարողության զարգացումը:

<<Կրթության մասին>> ՀՀ օրենքով <<լրացուցիչ կրթությունը>> սահմանում է, որ լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում՝ մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու, ինչպես նաև գիտելիքները, կարողությունները, հմտությունները կատարելագործելու և արդիականացնելու նպատակով:

6.2 **Լրացուցիչ ու շարունակական կրթության ապահովման առկա հիմնախնդիրները**

Էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման համար անհրաժեշտ նյութական, կազմակերպչական, ֆինանսական անբավարար միջոցները:

Բնապահպանական հիմնահարցերի արդյունավետ իրականացման համար մասնագետների պակասը:

Համացանցը և անցանց հարթակները բավարար չափով չեն օգտագործվում էկոլոգիական կրթություն իրականացնելու նպատակով: Չկան հայերենով էկոլոգիական դասընթացներ, ուսումնական ռեսուրսներ հասարակաության լայն խավերի, սովորողների համար:

Սակավաթիվ են էկոլոգիական թեմաներով ամառային ճամբարբերը: Մինչդեռ վերջիններս էկոլոգիական գործնական մեթոդներով իրականացնելու արդյունավետ միջոցներ են:

Բացակայում են կրթության բոլոր օղակների միջև համագործակցային, ոչ ֆորմալ հարթակները, ինչը սահմանափակում է միմյանցից սովորելու և լավագույն փորձը կրթության տարբեր մակարդակներում տարածելու հնարավորությունը: Էկոլոգիական կրթությունը անտեսված է շատ ընտանիքներում, բակերում, համայնքներում: Մինչդեռ հասարակության անդամները իրենց ընտանիքներում են անցկացնում իրենց ժամանակի մեծ մասը: Ծնողական կրթության վատթար վիճակի համատեքստում մեծապես տուժում է էկոլոգիական դաստիարակության իրականացումը ընտանիքում:
Ոչ ֆորմալ կրթության առաջնային միջավայր են համարվում բակերն ու համայնքները, որտեղ նույնպես էկոլոգիական խնդիրներն անտեսված են:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարելի է դպրոցներում անցկացնել բնապահպանական շաբաթներ, վիկտորինաներ, ստեղծագործական մրցույթներ, օլիմպիադաներ: Ցանկալի է աշխատանքների մի մասը կազմակերպել դպրոցից դուրս՝ բնության գրկում: Կարելի է քաղաքներում, որտեղ կան բուհեր, ուսումնական հաստատությունների միջև կապերի զարգացման, ուսումնական գործընթացի բարելավման համար սովորողների նախագծային աշխատանքների ղեկավարներ և ուղորդողներ դարձնել բնական գիտությունների ֆակուլտետների ուսանողներին: Այսպես նաև որոշ աշակերտներ գտնում են իրենց ապագա մասնագիտական ուղին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, էկոլոգիական կրթության շնորհիվ բարձրանում է էկոլոգիական գրագիտության (գիտելիքներ շրջակա միջավայրի վիճակի և բնության պահպանության մասին) մակարդակը: Ձևավորվում և ամրապնդվում է էկոպատասխանատվության կոմպետենցիաներ համապատասխան ոլորտում կոնկրետ խնդիրներ լուծելու կարողություններ, հմտությունների խումբ: Էկոլոգիական կրթությունը հնարավոր է դարձնում ձևավորել ու զարգացնել էկոլոգիական ապրելակերպ՝ էներգոխնայողություն, աղբի տեսակավորում, անթափոն արտադրություն, իրերի շրջապտույտ օգտագործում, միրգ-բանջարեղենի սեզոնային օգտագործում...

Էկոլոգիական կրթության շրջանակներում բնական գիտությունները բացահայտում են բնության պատճառահետևանքային կապերը, իսկ սոցիալական և հումանիտար գիտությունները պատճառահետևանքային կապերը մարդկության գործունեության տեսակետից, ինչպես նաև խնդիրների վերացման, թուլացման և կանխարգելման:Պատասխանատու մարդը ունակ է կանխատեսել իր և ուրիշների գործողությունները, ընդունել համապատասխան որոշումներ և իրականացնել դրանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.irtek.am
2. www.plus_one.rbc.ru
3. www.un.org
4. www.top-technologies.ru